

ՎԵՅԱԺՈՂՈՎ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԲՆԱԿԱՆ ԱՂԱՄԱՆՊ Ե՝ ԱՌԱՋԸՆԹԱՅԻ ՎԻԹԽԱՐԻ ՆԵՐՈՒԺՈՎ»

Սեպտեմբերի 24-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին Նյու Յորքում համաժողովի ՄԱԿ-ի գլխավոր վեբ-համաժողովի 76-րդ նստաշրջանում:



Իր խոսքում, վարչապետը անդրադարձավ Միավորված ազգերի կազմակերպության Վրաստանի անդամագրությունից հետո անցած 30 տարիների ընթացքում տեղի ունեցած փոփոխություններին՝ նշելով, որ Վրաստանը միշտ հավատարիմ է եղել ժողովրդավարության, մարդու իրավունքների և եվրոպական ու համաամերիկային արժեքներին:

- Պատմությունը ձեռավորել է մեզ որպես ուժեղ, հպարտ և դիմացկուն ազգի, որը բաց է աշխարհի համար և անդադար առաջընթացի ուղի-

ներ է որոնում: Վրաստանն այն բնական աղանդն է, որի հղկումն անհրաժեշտ է քաղաքակրթությանը՝ երկրի ողջ ներուժի ցուցադրման համար: (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՅՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Սեպտեմբերի 26-ին Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին, աշխատանքային այցով, գտնվում էր Ֆրանսիայում:



Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին և Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը Փարիզում մասնակցեցին Հաղթանակի կամարի մոտ հավերժական կրակ վառելու արարողու-

նը Փարիզում մասնակցեցին Հաղթանակի կամարի մոտ հավերժական կրակ վառելու արարողու-


թյանը՝ ի պատիվ Ֆրանսիայի համար զոհված զինվորների հիշատակին: Վրաստանի և Ֆրանսիայի նախագահները հարգանքի տուրք մատուցեցին Ֆրանսիայի համար զոհված զինվորների հիշատակին՝ Հաղթանակի կամարի մոտ անհայտ զինվորի շիրմին:

Արարողությանը հնչեցին Վրաստանի և Ֆրանսիայի օրհներգերը, նախագահները ծաղկեպսակ դրեցին և մեկ րոպե լռությամբ հարգեցին Ֆրանսիայի համար զոհված զինվորների հիշատակը, որից հետո Էմանուել Մակրոնը և Սալոմե Ջուրաբիշվիլին միմյանց ներկայացրին պատվիրակության անդամներին:

Արարողությունից հետո Սալոմե Ջուրաբիշվիլին և Էմանուել Մակրոնը հանդիպում ունեցան: (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Ե

ՀԱՎԱՏԱՐԻՄ ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐԻՆ ՈՒ ՍՏԱՆՁՆԱԾ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ



2020 թվականին լրացավ Վրաստանում լույս տեսնող հայալեզու «Վրաստան» թերթի 100-ամյակը: Մեկդարյա հոբելյանը միշտ նշանակալի տարեկից է, առանձնապես լրատվամիջոցների համար: Ասում են՝ «Ժամանակները փոխվում են, և մենք էլ փոխվում ենք՝ դրանց հետ միասին»: Անցած 100 տարիների ընթացքում նորագույն պատմության մեջ զլորալ համաշխարհային լայնածավալ փոփոխություններ տեղի ունեցան՝ փլուզվեց խորհրդային Միությունը, վերականգնվեց և եվրոպական ուղղու վրա կանգնեց անկախ Վրաստանը... Եվ բոլոր այդ տարիների ընթացքում «Վրաստան» թերթը շարունակում էր իր արտակարգ նշանակալի գործունեությունը, մնալով իր ընթերցողների և ողջ հասարակության ծառայությունում:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԴՈՒ ՄԵՁ՝ ՏԱՐԵՑՆԵՐԻՄ, ԱՊՐԵԼՈՒ ՕՐԻՆԱԿ ԵՍ ՏԱԼԻՍ...

Ահա և համարակարգում առաջ ու շնորհավորանքի իմ խոսքը եւս որոշեցի ուղղել կյանքիս ամբաժան ուղեկցին «Վրաստանին»: Դե, տեսնում եմ, որ ձեզ հայտնի մարդիկ են շնորհավորում ու մի տեսակ ամաչում էի, մտածում, երեւի հերթ չհասնի: Բայց միաժամանակ ինչպես կարող էի անմասն մնալ այն պատմական իրադարձությունից: Երկար սպասեցի, որ հոբելյանը շուրջով կնշվի ու ես կմոտենամ խմբագրին, կշնորհավորեմ: Բայց համավարակը դեռ չի ուզում նահանջել, ու ես որոշեցի ասելիքս ուղարկել խմբագրություն:



ՍՈՒՐԵՆ ԲԵՆԵՑՅԱՆ

Թբիլիսյան հայտնի Մադոյանի դպրոցից առ այս պահը, ես «Վրաստանի» հավատարիմ ընթերցողն եմ: Ի՞նչ տրանսպորտի փակում ու ի՞նչ տեղաշարժի սահմանափակում:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԱՅՍՕՐ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՌՎԱՐՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ Ե ԲՈՂՈՐՍ՝ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ:

Ընտրենք մունիցիպալիտետների արժանավոր քաղաքապետերի և սարկերուլոյի անդամների և նրանց միջոցով ակտիվորեն մասնակցենք մեր բնակավայրերի համար կենսական նշանակալի ու նեցող հարցերի ու հիմնախնդիրների կարգավորմանը: (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՆԱԽԱՋԵՆՈՒԹՅՈՒՆ

ԹԲԻԼԻՍՅԱՆ ՀԱՐԹԱԿ՝ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԻՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Սեպտեմբերի 27-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, ճեպագրույցում, բարձրաձայնեց կառավարության նոր նախաձեռնությունը՝ Թբիլիսիում երկխոսության հարթակ ստեղծել, որտեղ Վրաստանը կունենա միջնորդի դեր Հայաստանի և Ադրբեջանի միջև բանակցություններում:

Իրակլի Դարիբաշվիլու խոսքով՝ 2021 թվականի հունիսին Վրաստանը կարողացավ անմախաղեպ քայլ կատարել և օգնել երկու հարեւաններին:

- Հունիսին մենք, մեր հաջողված միջնորդությամբ կարողացանք անմախաղեպ քայլ կատարել, երբ տեղի ունեցավ, կարելի է ասել՝ խաղաղասիրական օպերացիա, և ակամապատ տարածքների քարտեզի դիմաց գերությունից ազատվեց 15 հայ զբերի: Իմ առաջարկը հենց այս գործընթացը շարունակելն է ավելի բարձր մակարդակով, և մենք միջնորդություն ենք առաջարկում մեր եղբայրական պետություններին, մեր ադրբեջանցի և հայ եղբայրներին: Երկխոսության հարթակը, որը պատրաստում ենք ստեղծել Թբիլիսիում, նշված նախաձեռնությանը շարունակական բնույթ կտա, - հայտարարեց Իրակլի Դարիբաշվիլին:

ՏԱՐԵԼԻՑ

ՍՈՒԽՈՒՄԻ ԱՆԿՈՒՄԻՑ ԱՆՅԵԼ Ե 28 ՏԱՐԻ

Սուխումիի անկումից անցել է 28 տարի:

13 ամիս և 13 օր շարունակվող հակամարտությանը զոհ դարձան 10 հազար վրաց զինվորականներ և խաղաղ բնակիչներ, ավելի քան 300 հազար մարդ բռնազաղթվեց հարազատ վայրերից, դարձան փախստականներ:

Սուխումիի անկման 28-րդ տարեկիցի առիթով Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Կախա Կուճավան, երկրի կառավարության անդամներն ու խորհրդարանի պատգամավորները, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները՝ Հերոսների հուշահամալիրին ծաղկեպսակ խոնարհեցին, հարգանքի տուրք մատուցեցին հայրենիքի համար զոհվածների հիշատակին:



ԿՐԹԱՎԱՆ

ԲՈԼՈՐԻՆ ՈՎ ՍՈՎՈՐՈՒՄ Ե ԵՎ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ, ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՆՈՐ ՈՒՍՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՑ ԲՈԼՈՐ ԳՊՐՈՅՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՅՈՒՄԸ ԿՄԵԿՆԱՐԿԻ ԳՍԱՍՐԱՆՆԵՐՈՒՄ

Միջգերատեսչական համակարգող խորհրդի որոշմամբ, հոկտեմբերի 4-ից Վրաստանի բոլոր դպրոցներում և բուհերում դասերը կվերսկսվեն դասարաններում և լսարաններում:

Վրաստանի կրթության նախարար Միխեիլ Չխենկելու խոսքով՝ հոկտեմբերի 4-ին ուսումնական գործընթացը կշարունակվի ինչպես պետական, այնպես էլ՝ մասնավոր



(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՐԱԿԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԻ. «ՄԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԱՆՎՏԱՆԳ ՄԻՋՎԱՅՐՈՒՄ ԱԶԱՏ ՈՒ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄՆ Է»

Հոկտեմբերի 2-ին անցկացվելիք տեղական ինքնակառավարման ընտրությունների անցկացման կապակցությամբ՝ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին քվիթեթյան իր էջում հաստատել է ներկայացրել է ինչպես կառավորող «Վրացական երազանք» կուսակցության, այնպես էլ՝ երկրի իշխանությունների դիրքորոշումը, ըստ որի՝ հիմնական նպատակն է անցկացնել ազատ և արդար ընտրություններ անվտանգ միջավայրում, որն էական է մեր եվրոպական և եվրատլանտյան ձգտումների համար:



«Նախ ուզում եմ ասել, որ մենք բացարձակապես խաղաղ, ազատ և ժողովրդավարական ընտրություններ ենք խոստանում հասարակությանը և մեր գործընկերներին: Մեր շարժառիթը, պատվախնդրությունը այն է, որ այժմ էլ անցկացնենք օրինակելի ընտրություններ, և երկիրը շարունակի խաղաղ, կայուն զարգացումը, որպեսզի հաջորդ երեք տարիների ընթացքում երկրում այլևս իրարանցում, քառու և ապակայունացում չլինի, որը ցանկանում են մեր ընդդիմախոսները: Վրաստանը բարձր է գնահատում ԵԱՀԿ/ՕԴԻԻ-ի հետաքրքրությունը, աջակցությունը և ակտիվ ներգրավվածությունը COVID-19-ի ընթացքում Վրաստանի ընտրական գործընթացի մոնիթորինգի գործում: Մեր հիմնական նպատակը ազատ և արդար ընտրությունների անցկացումն է անվտանգ միջավայրում, որն էական է մեր եվրոպական և եվրատլանտյան ձգտումների համար»,- գրել է Իրակլի Դարիբաշվիլին:

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին 2-ին հոկտեմբերի 2-ին, անց են կացվելու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՅՆԵՐԻ ՀԱՆՎԱՐԿԸ ԿՏԵՍԱԳՐԿԻ

Վրաստանում կայանալիք ընտրությունների ժամանակ, ընտրատեղամասերի մեծ մասում, ծայրերի հաշվարկի գործընթացը՝ առաջին անգամ տեսանկարահանող սարքերի միջոցով կտեսագրվի:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Գիորգի Կալանդադիզիլու խոսքով, տեսանկարահանումները տեղի կունենան 3200 ընտրատեղամասերում, և դա նշանակում է, որ ընտրատեղամասային հանձնաժողովների մեծամասնությունը հազեցած կլինի տեսասարքերով:

Գիորգի Կալանդադիզիլին և հավելեց, որ ընտրական համակարգի բարեփոխումը հանգեցրեց նաև փոփոխության, ըստ որի՝ քվեարկության օրվանից վեց օրվա ընթացքում պատահական ընտրված հինգ ընտրատեղամասերը պետք է վերահաշվարկվեն բոլոր ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում, ինչը եւս մեկ անգամ ապահովագրում է այս գործընթացը: Այս հինգ ընտրատեղամասերում վերահաշվարկի ժամանակ տեսանկարահանումը նույնպես ապահովված կլինի:

- Բացի այն, որ ամբողջ գործընթացը կտեսագրվի, որի շնորհիվ բազմաթիվ հարցեր կանհետանան, թափանցիկություն ապահովելու համար՝ քվեարկության հաջորդ օրը բոլոր այս տեսագրությունները կիրառարկվեն,- հայտարարեց

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐԻ ԻՆՉ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱՆՉՎԱՉՎԵՆ 2021-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Ինչպես արդեն հաղորդել ենք, այսօր՝ հոկտեմբերի 2-ին, անց են կացվելու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) կողմից ընտրություններին մասնակցելու համար՝ գրանցվել է շուրջ 50 ընտրական սուբյեկտ:

Նշենք, որ, ներկայիս տեղական ընտրությունները, ընտրական օրենսգրքում ընդունված փոփոխությունների պատճառով, որոշակիորեն կտարբերվեն նախորդ ընտրություններից:

ղամասային և տարածաշրջանային ընտրական հանձնաժողովներին: Մասնավորապես, ավելացել է ԿԸՀ անդամների թիվը: Ներկայումս հանձնաժողովը 12-ի փոխարեն կունենա 17 անդամ, որից 9-ը նշանակվում են կուսակցական քվտայով, իսկ 8-ն ընտրվում են մասնագիտական հիմունքներով: Ավելացել է նաև մարզային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների թիվը՝ մարզային և տեղամասային հանձնաժողովները բաղկացած են 17 անդամից, որից 9-ը նշանակվում են կուսակցական քվտայով, 8-ը՝ մասնագիտական գնահատականով:

Մասնավորապես, ընդունված փոփոխությունների համաձայն, քաղաքապետարանների ներկայացուցչական մարմնում՝ սակրեբուլյում, փոխվել է համամասնական և մեծամասնական ընտրակարգով ընտրվող պատգամավորների հարաբերակցությունը: Նոր ընտրակարգով Վրաստանի խոշոր 5 քաղաքների (Թբիլիսի, Քութայիսի, Բաթումի, Փոթի, Ռուսթավի) քաղաքապետարանի սակրեբուլյումը՝ չորս համամասնական պատգամավորի հաշվով, կընտրվի մեկ մեծամասնական պատգամավոր, իսկ մյուս քաղաքապետարաններում՝ յուրաքանչյուր մեկ մեծամասնականի դիմաց, սակրեբուլյում կլինի երկու համամասնական պատգամավոր:

Ավելացնենք, որ փոխվել է նաև ԿԸՀ նախագահը՝ Թամար Ժվանիային այդ պաշտոնում փոխարինել է Գիորգի Կալանդադիզիլին:

Ընտրական օրենսգրքի փոփոխություններն առնչվել են նաև ծայրերի հաշվարկման ընթացակարգին: Մասնավորապես, կներդրվեն նոր տեխնոլոգիաներ՝ էլեկտրոնային սարքերի միջոցով քվեարկություն, արդյունքների էլեկտրոնային եղանակով ընթերցում, ընտրողների մատնահետքերի գրանցում, տեսախցիկներ ընտրատեղամասերում: Թեև, ընտրությունների արդյունքները իրավական ուժ կստանան միայն ձեռքով հաշվարկվելուց և էլեկտրոնային հաշվիչի արդյունքների հետ համեմատելուց հետո:

Օրենսգրքի մեկ այլ փոփոխության համաձայն, ի տարբերություն 2017 թվականի տեղական ընտրությունների, ընտրաշենքը նվազեցվել է և նախորդ 4 տոկոսի ընտրաշենքի փոխարեն, այս ընտրություններին տարածաշրջաններում անցումային է համարվում 3 տոկոսը, իսկ Թբիլիսիում՝ 2,5 տոկոսը: Միաժամանակ, սահմանվել է մեծամասնական ընտրությունների շենքը, այն կազմելու է 40 տոկոս:

Բացի այդ, հոկտեմբերի 2-ի ընտրությունները տեսանկարահանվելու են ու հասանելի կլինեն համացանցում: Չայնեթի հաշվարկի գործընթացը տեսախցիկները կարձանագրեն 3200 ընտրատեղամասերում, այնտեղ, որտեղ ընտրողների

թիվը գերազանցում է 300-ը:

Ընդունած փոփոխությունների համաձայն, քվեարկության օրը արգելվում են ընտրատեղամասից 100 մետր հեռավորության վրա մարդկանց կուտակումները, ընտրողների տեղաշարժի խոչընդոտելու կամ ցուցակագրելը:

Զգալիորեն փոխվում է ընտրություններին հաջորդող քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության ձևաչափը, ներկայիս տեղական ընտրություններին տեղամասային ընտրական հանձնաժողովի կնքումից և դրա վերաբերյալ հանձնաժողովի բոլոր անդամների ստորագրումից հետո, քվեարկության արդյունքների ամփոփ արձանագրության մշակումը արգելվում է:

Փոփոխվել են նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից արդյունքների վերահաշվարկի կանոնները: Եթե մինչ այս տեղամասի արդյունքների հաշվարկը մարզային հանձնաժողովի հայեցողությամբ էր, և հանձնաժողովը կարող էր բողոքի հիման վրա բացել կնքված փաթեթը և վերահաշվարկել արդյունքները, ապա այժմ տեղամասային հանձնաժողովը պարտավոր է վերահաշվարկել տեղամասի քվեարկության արդյունքները:

Նշանակալի փոփոխություններից մեկը՝ ներկայիս ընտրությունների տեղամասերի պատահական վերահաշվարկն է: Մասնավորապես, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարտավոր է քվեարկությունից հետո, 6 օրվա ընթացքում, վերահաշվարկել 5 տեղամասերից վիճակահանությամբ ընտրված տեղամասի քվեաթերթիկները: Այս սկզբունքի համաձայն, կհաշվարկվի ամբողջ երկրի ընտրատեղամասերի 10 տոկոսը:

Փոփոխություններն առնչվեցին նաև բողոքարկումներին: Մասնավորապես, ներկայիս ընտրություններին, առաջին անգամ ընտրական խնդիրների վերաբերյալ բողոքները կարող են ներկայացվել կենտ-

րոնական և մարզային ընտրահանձնաժողովների էլեկտրոնային եղանակով՝ առցանց:

Կգործարկվի նաև՝ ընտրական վեճեր վարելու իրավասություն ունեցող անձանց էլեկտրոնային գրանցամատյան, որը կպարզի բողոքարկման իրավունք ունեցող անձանց, ինչը նշանակում է, որ միայն նրանք, ովքեր գրանցված են գրանցամատյանում, իրավունք ունեն դիմում/բողոք ներկայացնել ընտրական հանձնաժողովին:

Փոխվել են նաև բողոքների ներկայացման և դրանց քննարկման ժամկետները:

Փոփոխության համաձայն, տեղամասային ընտրական հանձնաժողովի/տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավարի որոշումը կարող է բողոքարկվել համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ այն ստանալուց հետո 2 օրվա ընթացքում, որը բողոքը կքննի 4 օրվա ընթացքում: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը կարող է բողոքարկվել 2 օրվա ընթացքում՝ համապատասխան մարզային/քաղաքային դատարան, որը բողոքը կքննի 2 օրվա ընթացքում: Իր հերթին, մարզային/քաղաքային դատարանի որոշումը կարող է բողոքարկվել Վերաքննիչ դատարան՝ այն ստանալու օրվանից 1 օրվա ընթացքում, որը բողոքը կքննի 2 օրվա ընթացքում: Վերաքննիչ դատարանի որոշումը վերջնական է և էլ բողոքարկվի:

Ինչ վերաբերում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի/հանձնաժողովների ղեկավարների որոշումներին, ապա դրանք կարող են բողոքարկվել ԿԸՀ՝ ստանալու օրվանից 2 օրվա ընթացքում: Բողոքը կքննարկեն այն ստանալու օրվանից 2 օրվա ընթացքում: ԿԸՀ-ի որոշումը կարող է բողոքարկվել Թբիլիսիի քաղաքային դատարանում՝ դրա ընդունումից 2 օրվա ընթացքում:

ՄԻՄՆ ԿԻԼԱՉԵ